ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՏՄ-ՄԱԱՊՁԲ-25/01

ք. Իջևան «07» փետրվար 2025թ.

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և "Սմարթլայն" ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 783300 (Յոթ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[17.1]:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ____2____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[17.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __20_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
_ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ	ՍՄԱՐԹԼԱՅՆ ՍՊԸ
Հասցե՝ ք.Իջևան, Սահմանադրության 1	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
900371051039	Հ/Հ 1150009537660100
07628257	ՀՎՀՀ 01548908
Արման Գևորգյան	Տ. Ղարիբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ. Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«07» փետրվարի 2025 թ. կնքված
***ՀՀՏՄ-ՄԱԱՊՁԲ-25/01** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման հասցեն և ժամկետը		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	22611400	Ներկ գունավոր պրինտերի համար	1)Ներկեր գունավոր պրինտերի, EPSON L 1300 համար:/Օրիգինալ հավաքածու,1-կարմիր,1-կապույտ,1-դեղին,2-սև/1 կոմպլեկտ 2) Ներկեր գունավոր պրինտերի, EPSON L 123-Ի համար:/Օրիգինալ/::Հավաքածու,4 գույն Օրիգինալ հավա քածու,1-կարմիր,1-կապույտ,1-դեղին,1-սև/1 կոմպլեկտ	կգ	20000	20000	1	ք.Իջևան, Սահմ. 1	1	2-րդ եռամսյակ
2	22811150-1	Նոթա տետրեր	Բլոկնոտ կրկնակի պարույրներով, A5 չափի, մինչև 100թերթ, տողանի, պարույրները վերևից, կազմը միագույն	հատ	250	25000	100	ք.Իջևան, Սահմ. 1	70	1-ին եռամսյակ
									30	2-րդ եռամսյակ
3	30141200	Հաշվե սարք, գրասենյա	Սեղանի հաշվիչ մեքենա,KENKO կամ Collin KK-1200v	հատ	2000	10000	5	ք.Իջևան, Սահմ. 1	3	2-րդ եռ.

		կային							2	3-րդ
4	30192111-1	Թանաքի բարձիկ	Թանաքի բարձիկ, մետաղական տուփով	հատ	700	7000	10	ք.Իջևան, Սահմ. 1	10	1-ին եռամսյակ
5	30192114-1	Թանաք կնիքի բարձիկի համար	Թանաք կնիքի բարձիկի համար	հատ	400	4000	10	ք.Իջևան, Սահմ. 1	10	1-ին եռ.
6	30192121	Գնդիկավոր գրիչ	Գնդիկավոր գրիչ,կապույտ միջուկով, Hauser Gliss -H6058 -1.0մմ	հատ	80	24000	300	ք.Իջևան, Սահմ. 1	80	1-ին եռամսյակ
									220	2-րդ եռամսյակ
7	30192128	Գրիչ գելային	Գրիչ գելային Uni-ball Jetstream - SX-210-1.0մմ, կապույտ,020-032	հատ	600	18000	30	ք.Իջևան, Սահմանադրության 1	30	1-ին եռամսյակ
8	30192130	Մատիտներ	Գրաֆիտե մատիտներ SKY GLORI,HB 654,կամ համարժեքը,վերջնամասում ռետինով	հատ	100	5000	50	ք.Իջևան, Սահմ. 1	50	2-րդ եռամսյակ
9	30192133	Սրիչներ	Սրիչ պլաստիկ.սրվածքի տուփով, երկու անցքով,Patio -89159PTR,կամ համարժեք	հատ	350	10500	30	ք.Իջևան, Սահմ. 1	30	2-րդ եռ.
10	30192160	Շտրիխներ	Տարբեր գույնի գրիչներով գրվածը սպիտակեցնող նյութ,վրձնով:	հատ	200	6000	30	ք.Իջևան, Սահմանադրության 1	30	2-րդ եռամսյակ

11	30196100-1	Ժողովների պլանավորման բլոկնոտներ	Ժողովների պլանավորման բլոկնոտ,/ձեռքի նոթատետր/,2025թ. համար,օրացույցով,էջերի մակնշումով;Մուգ,միագույն,փափուկ կաշվենման կազմով, էջանշանով ,20×15մմ չափսի	հատ	5200	15600	3	ք.Իջևան, Սահմ.1	3	1-ին եռամսյակ
12	30196100-2	Ժողովների պլանավորման բլոկնոտներ	Ժողովների պլանավորման բլոկնոտ, /ձեռքի նոթատետր/, Մուգ, միագույն, փափուկ կաշվենման կազմով, էջանշանի առկայությունը նախընտրելի է, 20×15մմ չափսի, առանց տարեթվի	հատ	2500	37500	15	ք.Իջևան, Սահմ. 1	15	1-ին եռամսյակ
13	30197112-2	Կարիչի մետաղական կապեր մեծ	Կարիչի միջուկներ 24/6-1m չափի, մետաղական, 20-50 թերթ ամրացնելու համար	տուփ	200	2000	10	ք.Իջևան, Սահմ.1	10	4-րդ եռամսյակ
14	30199111-1	Կարիչի մետաղական կապեր փոքր	Կարիչի միջուկներ 23/13 չափի,մետաղալարե,մինչև 100 թուղթ կարելու համար	տուփ	180	3600	20	ք.Իջևան, Սահմ. 1	20	4-րդ եռամսյակ
15	30197112-2	Կարիչի մետաղական կապեր միջին	Կարիչի միջուկներ 24/6-1m չափի,մետաղական,20-50 թերթ ամրացնելու համար	տուփ	180	9000	50	ք.Իջևան, Սահմ.1	50	4-րդ եռամսյակ
16	30197230-1	Թղթապա նակ	Թղթապանակ կաշվենման կազմով A4 թղթերի համար, կազմը ՝ՀՀ գերբով, գույնը սև կամ շագանակագույն	հատ	2000	12000	6	ք.Իջևան, Սահմ. 1	6	1-ին եռամսյակ
17	30197231-1	Թղթապա նակ, պոլիմերային թաղանթ,	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու	հատ	12	30000	2500	ք.Իջևան, Սահմանադրության 1	1300	1-ին եռամսյակ

		ֆայլ	հնարավորություն, 50 միկրոն, կամ համարժեք:						1200	2-րդ եռամսյակ
18	30197321-1	կարիչ	Կարիչ մինչև 20թերթի համար	հատ	1000	5000	5	ք.Իջևան, Սահմ. 1	5	3-րդ եռ
19	301971001	Կարիչ մինչև 20-50 թերթի համար	Կարիչի միջուկներ 23/13 չափի,մետաղալարե,մինչև 100 թուղթ կարելու համար	հատ	1500	22500	15	ք.Իջևան, Սահմ. 1	15	3-րդ եռամսյակ
20	30197622-1	Թուղթ A4 ֆորմատի	Թուղթ A4 ֆորմատի, ֆոտոթուղթ	կգ	7600	38000	5	ք.Իջևան, Սահման ադրության 1	5	1-ին եռ.
21	30197622-2	Թուղթ A4 ֆորմատի	Թուղթ A4 ֆորմատի, երկկողմանի ֆոտոթուղթ	կգ	9500	38000	4	ք.Իջևան, Սահման ադրության 1	4	1-ին եռ.
22	30197622	Թուղթ , Ա4	Թուղթ A4, օգտագործվում է տպագրության համար, չկավճապատված, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, պետք է համապատասխանի ISO 9001, 14001, OHSAS 18001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին, խտությունը՝ համաձայն ISO 536 80գր/մ2, պայծառությունը՝ առնվազն 105%, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 առնվազն 161CIE%, հաստությունը՝ համաձայն ISO 534 առնվազն 104Մկմ,	կգ	700	280000	400	ք.Իջևան, Սահմ. 1	198 202	3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ

			անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 առնվազն 93%, անհարթությունը՝ 220 մլ/րոպե-ից ոչ ավել, խոնավությունը՝ 3,5-4,5%, քաշը 1 մ քառ - 80 գրամ, չափսը 210 մմ x 297 մմ, գույնը սպիտակ, մակերեսը հարթ, ծածկողականությունը ըստ պետական չափանիշների, նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար:							
23	30199400	Սոսնձապատված կամ կպչուն թուղթ	Կպչուն թերթիկներ նշումների համար, 7.5 x 7.5 մմ չափի,/60 տուփ/, սպիտակ	հատ	250	15000	60	ք.Իջևան, Սահման ադրության 1	30 30	2-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ
24	31641217	Սեղմակ	Մինչև 120 թուղթ կարելու համար,51 մմ,տուփ,տուփի մեջ 12 հատ	տուփ	80	4000	50	ք.Իջևան, Սահմ. 1	50	2-րդ եռամսյակ
25	35821400	Դրոշ	ՀՀ պետական դրոշ , 1*2 չափսի, շենքի արտաքին տանիքին տեղադրելու համար	հատ	6000	48000	8	ք.Իջևան, Սահմ. 1	8	2-րդ եռամսյակ
26	39224342-1	Աղբարկղ	Աղբարկղ գրասենյա- կային, մետաղյա,	հատ	1400	5600	4	ք.Իջևան, Սահմ. 1	4	4-րդ եռ.
27	39241141	Դանակ գրասենյա կային	Դանակ գրասենյակային,թուղթ կտրելու համար	հատ	200	1000	5	ք.Իջևան, Սահմանադրության 1	5	2-րդ եռամսյակ

28	39263310-1	Օրացույց սեղանի	Աշխատանքային օրացույց OfficeSpace 2025թ., կաշվենման կազմով, վերևից պարույրով,մոտավորապես 34x13 չափերի, աշխատանքային նշումների համար,	հատ	1800	27000	15	ք.Իջևան, Սահմանադրության 1	15	1-ին եռամսյակ
29	39298200-1	Նկարի շրջանակներ A4 չափի	Նկարի շրջանակներ A4 չափի,պատվոգրեր,շնորհա կալագրեր տեղադրելու համար,մուգ,միագույն	հատ	1000	60000	60	ք.Իջևան, Սահմ. 1	60	2-րդ եռամսյակ

ԳՆՈՐԴ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
Հասցե՝ ք.Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900371051039
07628257
Արման Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՍՄԱՐԹԼԱՅՆ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
Տ.Դարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«10» փետրվարի 2025 թ. կնքված
ՀՀՏՄ-ՄԱԱՊՁԲ-25/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22611400	Ներկ գունավոր պրինտերի համար				20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
2	22811150-1	Նոթա տետրեր	17500	17500	17500	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
3	30141200	Հաշվեսարք, գրասենյակային				6000	6000	6000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
4	30192111-1	Թանաքի բարձիկ	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000

5	30192114-1	Թանաք կնիքի բարձիկի համար																					
6	30192121	Գնդիկավոր գրիչ	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400
7	30192128	Գրիչ գելային	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
8	30192130	Մատիտներ																					
9	30192133	Սրիչներ																					
10	30192160	Շտրիխներ																					
11	30196100-1	Ժողովների պլանավորման բլոկնոտներ	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600
12	30196100-2	Ժողովների պլանավորման բլոկնոտներ	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750
13	30197112-2	Կարիչի մետաղական կապեր մեծ	2000	2000	2000	2000	2000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
			15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600	15600
			10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500
			5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
			18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
			24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000
			4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000

14	30199111-1	Կարիչի մետաղական կապեր փոքր										3600	3600	3600	3600
15	30197112-2	Կարիչի մետաղական կապեր միջին										9000	9000	9000	9000
16	30197230-1	Թղթապա նակ	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
17	30197231-1	Թղթապա նակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	15600	15600	15600	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
18	30197321-1	կարիչ							5000	5000	5000	5000	5000	5000	5000
19	301971001	Կարիչ մինչև 20-50 թերթի համար							22500	22500	22500	22500	22500	22500	22500
20	30197622-1	Թուղթ A4 ֆորմատի	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000
21	30197622-2	Թուղթ A4 ֆորմատի	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000	38000
22	30197622	Թուղթ , Ա4							138600	138600	138600	280000	280000	280000	280000

23	30199400	Սոսնձապատված կամ կպչուն թուղթ				7500	7500	7500	7500	7500	7500	15000	15000	15000	15000
24	31641217	Սեղմակ				4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
25	35821400	Դրոշ				48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000	48000
26	39224342-1	Աղբարկղ										5600	5600	5600	5600
27	39241141	Դանակ գրասենյա կային				1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
28	39263310	Օրացույց սեղանի	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000
29	39298200	Նկարի շրջանակ				60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000	60000
Ընդամենը			236600	236600	236600	444100	444100	444100	614200	614200	614200	783300	783300	783300	783300

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
Հասցե՝ ք.Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900371051039
07628257
Արման Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՍՄԱՐԹԼԱՅՆ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
Տ. Դարիրյան
/ստորագրություն/
Կ. Տ

Հավելված N 3
« 10 » փետրվարի 2025 թ. կնքված
***ՀՀՏՄ-ՄԱԱՊՁԲ-25/01** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 10 » փետրվարի 2025 թ. կնքված
ՀՀՏՄ-ՄԱԱՊՁԲ-25/01 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն